

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻ
(Ծննդյան 300-ամյակի առթիվ)

Վ. Ե. ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ,

XVIII դարի հայ կյանքի նշանավոր դեմքերից է Մխիթար Սեբաստացին։ Նա թողել է լեզվաբանական, բառարանագրական բավական արժեքավոր գիտական ժառանգություն։ Նրա ջանքերով օտար հողում ստեղծվեց հետազայում իր անունը կրող միաբանությունը, որը դարձավ հայագիտության կարեւոր օջախներից մեկը և շուրջ 260 տարիների իր գոյության ընթացքում մեծ դեր կատարեց հայ մշակույթի զարգացման գործում։

Մխիթար Սեբաստացին ծնվել է 1676 թ. փետրվարի 7-ին, Սեբաստիա քաղաքում։ Նրա անունը եղել է Մանուկ։ 1691 թ., երբ ընդունել է հոգևորական կոչում, վերանվանվել է Մխիթար։

Սեբաստացին գրաճանաչություն սովորել է ծննդավայրում։ Փոքր հասակից մեծ հակում է ցուցաբերել դեպի ուսումը, և ինը տարեկան Մխիթարին իր ծննդավայրի Ս. Նշան վանքի առաջնորդ Անանիա եպիսկոպոսը նշանակում է վանքի դպիր։

Տասնամյա Մխիթարը, յուրացնելով իր ուսուցչի ողջ գիտելիքները, Սեբաստիայում բնակվող Մանասե և Մարիամ կույսերի մոտ ձեռնամուխ է լինում իր կրթության խորացմանը։ Կույսերը վարում էին ճգնավորի կյանք և խրեխային ներշնչում էին այդ ոգին։ Նրանց ազդեցությամբ երեխան հեռանում է աշխարհիկ կյանքից և ձգտում ճգնավորության, սակայն ծնողների դեմ էին պատանու այդ ցանկությանը։ 1691 թ. ձեռնադրվում է սարկավագ։ Այստեղ նա ջանասիրաբար զբաղվում է ինքնազարգացմամբ, բազմիցս կարդալով վանքի սեփականությունը հանդիսացող ձեռագրերը, կատարում է իր գրական առաջին փորձերը՝ գրում քարոզներ, տաղեր։ Սակայն կարճ ժամանակ անց որոշում է հեռանալ վանքից։

Ս. Նշան վանքը լքելուց հետո Մխիթարը նախ փորձում է միանալ Կարինից Սեբաստիա ժամանած, ժամանակին գիտական որոշ համբավ վայելող Ղազար վարդապետին, սակայն հանգամանքների բերումով նրան այդ չի հաջողվում։

Նույն թվականից սկսվում է Մխիթար Սեբաստացու թափառական կյանքը։ Նա գրավում է էջմիածնի նվիրակ Միքայել եպիսկոպոսի ուշադրությունը, որն իր հետ նրան տանում է նախ Կարին, ապա՝ էջմիածին։ Դիմանալով ցրտին, հանապարհի բոլոր անպատեհություններին, Միքայել եպիսկոպոսի դաժանություններին, Մխիթարը Սեբաստիայից ոտքով հասնում է մինչև էջմիածին, լուկայն հույսով, որ այնտեղ կգտնի բանիմաց հոգևորականների և կկարողանա լրացնել իր ուսման թերին, սակայն շատ շուտով հուսախաբ է լինում։ Եթե Ս. Նշան վանքում նա զգում էր միայն գիտուն հոգևորականների

պակաս, ապա այստեղ, էջմիածնում, դաժանորեն են վարվում նաև նրա անձի հետ: Միքայել եպիսկոպոսը ոչ միայն չի փորձում հետևել նրա կրթությանը, այլ ընդհակառակը, արվելում է որևէ գրքի ընթերցանություն և ստիպում կատարել իր բոլոր քմահաճույքները, ինչպես սովորական մի սպասաւոր:

Այս անտանելի վիճակին երկար չի դիմանում նա և գաղտնի փախչում է ու ապաստանում Սեանա վանքում: Նրա այն երազանքը, թե դուցե այստեղ հանդիպի ուսումնասեր վարդապետների, դարձյալ ի դերև է ելնում: Սեանը բոլորովին էլ չէր տարբերվում էջմիածնից: Ուստի Մխիթարի հեռանում է նաև այստեղից և 1692 թ. գարնանը ճանապարհ է ընկնում դեպի Սեբաստիա: Հասնելով Բասեն, հանգրվանում է այնտեղ և մնում ավելի քան մեկ տարի, դբաղվելով ուսուցչությամբ, սակայն որոշ ժամանակ անց, տեսնելով իր աշակերտների անուսումնասեր ոգին, հեռանում է Բասենի վանքից և 1693 թ. վերադառնում Սեբաստիա:

Ամբողջ երկու տարի Ս. Նշան վանքում անցկացնելուց հետո, 1695 թ. որոշում է ուղևորվել Հոռմ՝ կրթությունը շարունակելու: Նախ գնում է Հալեպ, այնտեղ մտերմանում լատին հոգևորականների հետ, կաթոլիկ հոգևորական Անտոն Հիսուսյանից հանձնարարականներ վերցնում, սակայն Հոռմի ճանապարհին, Կիպրոսում, ծանր հիվանդանում է և ստիպված լինում վերադառնալ Սեբաստիա:

1693 թ. գարնանը Սեբաստացին ձեռնադրվում է քահանա և առաջին անգամ միտք հղանում հիմնելու ինքնուրույն միաբանություն: Հաջորդ տարի իր մտադրությունն իրագործելու նպատակով մեկնում է Կ. Պոլիս, քարոզում Ղալաթիա թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցում: Սակայն այս անգամ նրա ձեռնարկումը հաջողություն չի ունենում և նա ձեռնունայն վերադառնում է գավառ, հաստատվում Կարինում, այստեղ էլ ձեռնադրվում է վարդապետ և քարոզում Կարմիր վանքում:

Դարեր շարունակ հայ կյանքում ուժեղ ուլաքար է մղվել կաթոլիկների և լուսավորչականների միջև: Սա լուկ կրոնական երևույթ չէր, այլ ունի խորապես քաղաքական բովանդակություն: Ահա այս ակնթույլի փոթորկի դիրկն է ընկնում նաև Մխիթարը, որը իբրև կաթոլիկ, այն փոքրամասնության ներկայացուցիչներից էր, որոնք ավելի դաժան դատաստանի էին արժանանում: Սեբաստացին էլ, բնականաբար, ենթարկվում է Կարնո առաջնորդի թշնամանքին և երկրորդ անգամ, 1700 թ., ուղևորվում Կ. Պոլիս: Այստեղ նա դարձյալ քարոզում է Ս. Լուսավորիչ եկեղեցում, որտեղ և իր շուրջն է համախմբում այն առաջին աշակերտներին, որոնք հետագայում պիտի կազմեին նրա միաբանության կորիզը:

Սակայն այստեղ ևս նա ենթարկվում է պատրիարքներ Եփրեմ Ղափանցու, ապա նաև Ավետիքի բացահայտ հալածանքին: Երբ արդեն նրա կյանքն անգամ վտանգի տակ է լինում, հեռանում է և ապաստանում կաթոլիկական Վեղարավորաց վանքում: Այստեղ նա իր շուրջն է համախմբում իր բոլոր աշակերտներին և 1701 թ. սեպտեմբերի 8-ին հիմնում «Որդեգիր կուսին վարդապետ ապաշխարհություն» միաբանությունը: Պոլսում աննպաստ պայմանները և շրջապատի կասկածամտությունը, հակակաթոլիկական տրամադրությունները ապահով լուրջ դիտական աշխատանքի հնարավորություն չեն տալիս, ուստի միաբանությունը հաստատվում է Մոռա (Մոռեա) թերա-

կղզու Մեթոն բերդաքաղաքում։ Այստեղ է, որ նա մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում է լատիներեն լեզուն և աստվածաբանության դասախոսությունների ընթացքում անդրադառնում է XIV դարում թարգմանված Թովմա Ակվինացու աստվածաբանության գրքին։ Մխիթարի ջանքերով թարգմանությունը շտկվում է, մաքրվում լատինաբան հայերենից և հրատարակվում 1815 թ.

Անշուշտ, Մխիթար Սեբաստացու նպատակները շատ էին տարբեր մյուս կաթոլիկ քարոզիչների նպատակներից։ Եթե մյուսները ցանկանում էին հայերին կաթոլիկադավան դարձնել զուտ Հռոմի թելադրանքով, ապա Մխիթարի նպատակն էր կամուրջ ստեղծել կաթոլիկության և լուսավորչականության միջև՝ Հայաստանում քաղաքակրթության տարածելու համար։ Այսպիսով, Սեբաստացու նպատակն էր ստեղծել ոչ միայն հոգևոր միաբանություն, այլև պատրաստել ուսումնականների մի դարբնոց՝ ապագայում Հայաստանը լուսավորելու նպատակով։

Մխիթար Սեբաստացին իր այս մտահղացումներն իրագործելու համար Հայաստանում չի կարողանում որևէ տեղ հաստատվել։ Հռոմի պապը, մտածելով, որ Սեբաստացին կաթոլիկական պրոպագանդայի գործում կարող է մեծ դեր կատարել, 1712 թ. պաշտոնապես հաստատում է Մխիթարյան միաբանությունը և Մխիթարին նշանակում արքահայր։

Սակայն Մեթոնում, որտեղ արդեն կառուցվել էր հայկական առաջին վանքը, Սեբաստացին երկար չի կարողանում մնալ։ 1715 թ., Թուրքիայի և Վենետիկի միջև բռնկված պատերազմի ժամանակ նա ստիպված է լինում լքել տարիների ջանքերի արդյունք այս կացարանը ևս և հանգրվանել Վենետիկի Ս. Ղազար կղզում, որով վերջանում են Սեբաստացու երկարամյա դեպերումները։ Մխիթարը այստեղ կառուցում է վանք և հիմնում դպրոց։ Նրա ջանքերի շնորհիվ Ս. Ղազարը դառնում է հայ կրոնական, կրթական ու գիտական կարևոր կենտրոններից մեկը։

Հայ նշանավոր հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը իր «Մխիթար և Մխիթարյանք» հոդվածում, անդրադառնալով դրսում, օտար հողում հայ մշակույթի օջախների ստեղծման հարցին, գրում է. «Հայոց ազգի փոքրիշատի իմացական նորոգությունը պիտո է կատարվել օտար աշխարհում... Հայկական դպրությունը պիտո էր հյուր գնալ Իտալիա և օտար հացով սնանել»¹, որովհետև Հայաստանում նման օջախներ ստեղծելու հնարավորություններ չկային։



¹ Մ. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հատ. II, Երևան, 1947, էջ 136։

Սեբաստացին միաբանությունը հիմնում է հետապնդելով գլխավորապես քարոզչական նպատակներ և խիստ կարգեր է մտցնում Ս. Ղազարի կղզում: Միաբանության անդամները կրթություն ու դաստիարակություն էին ստանում կղզում փակված: Մխիթարը եվրոպական հողի վրա առաջին հայ դպրոցի հիմքն է դնում, որտեղ պատրաստվում էին կրոնական ու գիտական կադրեր: Օտարների համար արգելված էր Ս. Ղազար դպրոցի մուտքը: Նա դրանով աշխատում էր պահպանել հայկականությունը, պատրաստել հայ քարոզիչներ Հայաստանում կաթողիկոսություն տարածելու համար:

Մխիթար Սեբաստացին իր եռանդի ու նվիրվածության շնորհիվ կղզին դարձնում է կրթական գործի կադմակերպման, հայագիտական լալյն գործունեության միջավայր: Ունենալով բազմակողմանի ընդունակություններ, իմացական արտակարգ ձիրք, երկաթյա կամք և բացառիկ անհատականություն, Մխիթար Սեբաստացին ոչ միայն իր վրա է առել աշակերտների կրթության և հաստիարակության գործը, այլև զբաղվել է գրական ու հրատարակչական աշխատանքով: Պոյսում նա հրատարակել և տպագրել էր ընդամենը 4 կրոնական գիրք: Ինչպես գիտենք, Վենետիկը հայտնի էր դարձել XVIII դարի առաջին կեսին իր հայկական գեղեցիկ հրատարակություններով: Առանձնապես մեծ անուն ունեւր Անտոն Բորտուի տպարանը: Եթե մինչև XVIII դարի կեսը Վենետիկում լույս են տեսել 85 անուն գիրք, ապա նրանցից 75-ը տպագրվել են Անտոն Բորտուի տպարանում: Վենետիկում տպագրվող գրքերի ձևը ու մեծամասնությունը թարգմանական գրականություն էր, որին իր գործունեությամբ ու թարգմանություններով օգնում և նյութեր էր մատակարարում Պետրոս վարդապետ Թիֆլիզցին կամ Մցխեթցին: Վենետիկում հայկական հրատարակիչների խմբին միացավ նաև մխիթար Սեբաստացին, որը, սակայն, գերազանցեց նրանց ոչ միայն հրատարակություններով, այլև ինքնուրույն գործերով ու աշխատություններով: Մխիթար Սեբաստացին Ս. Ղազարում ծավալում է ինչպես մանկավարժական, այնպես էլ գիտական լայն գործունեություն, հրապարակի վրա դնելով մի շարք բարձրարժեք գրքեր: Նրա ևրկերի մեջ հատկապես կարևոր են քերականական և բառարանագրական աշխատությունները, որոնցով սկսվում է հայագիտության զարգացման մի ամբողջ պատմաշրջան:

Իր գործունեության հենց առաջին օրերից Մխիթար Սեբաստացուն հուզող հարցերից մեկը լինում է լեզվի խնդիրը: Մինչև այդ ժամանակ մեր մատենագրության համար որդեգրված լեզուն գրաբարն էր, որը վաղուց ի վեր դադարել էր ժողովրդին հասկանալի լինելուց: Մխիթարը դիտեր, որ անհնար է գրաբարը դարձնել բոլորի համար հասկանալի լեզու. ավելի հեշտ էր աշխարհաբարը հղկել, նրա համար ստեղծել քերականական կանոններ և դարձնել գրական լեզու: Նա 1727 թ. լույս է ընծայում «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց, շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ» աշխատությունը: Վերնագրից էլ երևում է, որ հեղինակի նպատակներից մեկը եղել է թուրքախոս հայերին բերել դեպի մայրենի լեզուն. այդ է վկայում նաև գրքի վերջում զետեղված հայերենից թուրքերեն բառարանը:

Վերոհիշյալ քերականության լույսընծայումից հետո նա գրում է աշխարհաբարի արդեն լիակատար քերականությունը, սակայն այստեղ էլ կանգ է առնում, չի տպագրում. այդ դիրքը այնպես էլ մնում է անտիպ մինչև այսօր: Նա համոզվում է, որ վաղաժամ է նման մի արմատական բարե-

փոխություն գրական լեզվում: Հույները, որոնց լեզվին ու մատենագրությանը նա քաջ ծանոթ էր, այդ փորձը կատարել էին դեռևս XVI դարում, հրատարակել նոր հունարենի՝ ռոմեյթայի քերականությունը, ուսումնական ձեռնարկներ, ճարտասանության, թվաբանության վերաբերյալ գրքեր, վերջուպես Ավետարանը, — և այս բոլորը դարձյալ կաթոլիկ քարոզիչների ջանքերով, — սակայն հույն ուղղափառ եկեղեցին մոլեգին պայքար էր սկսել այդ շարժման դեմ, բանադրել նոր հունարենով Ավետարան կարդացողներին, ստիպելով դադարեցնել սկսված շարժումը: Մխիթարի հրատարակությունները հանդիպելու էին նույնպիսի դիմադրության հետագեմ հոգևորականության կողմից:

Այս բոլորը հաշվի առնելով, Մխիթարը անցնում է գրաբարին, աշխարհաբարի կիրառումը թողնելով հետագա ավելի նպաստավոր ժամանակներին:

Աշխարհաբարի քերականությունից երեք տարի հետո նա հրատարակում է «Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռի», «Հարցումն քերթողական և պատասխանի զքերականութենէ և զմասանց նորին» և այլ գրքեր:

Սեբաստացու այս աշխատությունները հայ լեզվաբանության մեջ նշանավորում էին ուրույն մի պատմաշրջան: Մինչև XVI դարը հայոց լեզուն չունէր իր մշակված քերականությունը, այդ բառի ժամանակակից առումով: Նշածներն էլ ստեղծել էին լատին և հայ կաթոլիկ քարոզիչներ Կղեմես Գալանոսը, Ֆրանչիսկո Ռիվոլան, Հովհաննես Հոլովը և ուրիշներ, որոնք ձգտում էին մեր լեզվի օրինաչափությունները հարմարեցնել լատիներենի քերականական օրենքներին, ստեղծել բմահաճ բայեր, խոնարհումներ, համաձայնություններ, աղճատելով մեսրոպյան ավանդական գրաբարը: Մխիթարն առաջին անգամ իր գրքերում նորամուտ հղումները, խոնարհումները բաղդատում էր հին հայերենի համապատասխան ձևերի հետ, պարզում հայացի, հարադատ ձևերը: Թեև նա չկարողացավ մաքրել գրաբարի քերականությունը լատինաբանների բոլոր նորամուծություններից, սակայն գծեց այն ուղին, որով ընթացան հետագա քերականները, մասնավորապես Միքայել Զամչյանը:

Հայ բառարանագրության մեջ կոթողային գործ է Մխիթարի «Բառգիրք հայկազեան լեզուի» մեծարժեք բառարանը: Սեբաստացուն չվիճակվեց իր բառարանը տեսնել տպագրված. առաջին հատորի տպագրության ժամանակ նա ծանր հիվանդանում է և 1749 թ. ապրիլի 27-ին, գիրքը լույս տեսնելուց 22 օր առաջ, վախճանվում: Երկրորդ հատորը լույս է տեսել 1769 թ. և փաստորեն լրացնում է առաջին հատորը, պարունակելով նրանից դուրս մնացած բառերը, դրաբարից աշխարհաբար, աշխարհաբարից գրաբար և հատուկ անունների բառգրքերը: Բառարանի առաջաբանում ամփոփված են հեղինակի լեզվաբանական հայացքները: Այստեղ նա խոսում է աշխարհաբարի և գրաբարի փոխհարաբերության, օտար փոխառությունների, բարբառների առաջացման և այլ հարցերի մասին: Միայն բառերի հավաքումը չէ Սեբաստացու բառարանի արժանիքը. նա իր բառգրքում փորձել է ստուգաբանել հայերեն բազմաթիվ բառեր, գիտական բացատրություն տալով հատկապես հունարենից, պարսկերենից, երբայերենից փոխառյալ շատ բառեր:

Մխիթար Սեբաստացու լեզվաբանական աշխատություններով ավարտվում է հայ լեզվաբանության հին շրջանը և սկիզբ դրվում նորին, որի փայլուն ներկայացուցիչները եղան Մխիթարյան միաբանության անխոնջ ան-

դամներից Միքայել Չամչյանը, Հարություն Ավգերյանը, Գաբրիել Ավետիքյանը և ուրիշներ:

Մխիթարի դերը հայագիտության, հայ լեզվաբանության դարգացման ու մշակույթի պատմության մեջ չի սպառվում իր գրչին պատկանող աշխատություններով: Հատկապես մեծ է այն ծառայությունը, որ կատարել է նրա անունը կրող միաբանությունը հայագիտության մեջ:

Մխիթարի մահից տարիներ անց միաբանության՝ պապական դոգմաներին գերի թևը հեռանում է Վենետիկի Ս. Ղազար կղզուց, հաստատվում նախ Տրիեստում, ապա 1811 թ.՝ Վիեննայում, ստեղծում նոր միաբանություն, որն իր գոյությունը շարունակում է մինչև օրս: Այս միաբանները Տրիեստի շրջանում (1773—1810) հրատարակել են բացառապես դավանաբանական գրքեր հայատառ թուրքերեն: Հետագայում, արդեն Վիեննայում հաստատվելուց հետո աստիճանաբար հակվել են դեպի հայագիտությունը, զբաղվել հայ հին մատենագրության ու լեզվի ուսումնասիրությամբ:

Առաջին հարյուրամյակում, 1750-ական թթ. մինչև 1850-ական թթ., Մխիթարյան միաբանությունը արգասավոր գործ է կատարել իր հարյուրավոր հրատարակություններով, դասագիրք-ձեռնարկներով, դպրոցներով, կրթական ու գրական մշակներով, ուղղություն տալով հայ մշակույթի դարգացմանը մասնավորապես արևմտահայ հատվածում: Միաբանության աշխատանքը ընթացել է երեք ուղղությամբ՝ կրթական, հրատարակչական և գիտական:

Բացի Վենետիկի Ս. Ղազար կղզու և Վիեննայի վանքի վանական դպրոցներից, որոնք հիմնականում պատրաստել են հոգևորականներ, Մխիթարյանները դպրոցներ են ունեցել այն բոլոր վայրերում, որտեղ մեծ թվով հայեր են ապրել, լինեն դրանք Արևմտյան Նվրոպայում (Վենետիկ, Պադուա, Փարիզ), Բալկաններում (Ռումինիա, Բուլղարիա), արաբական երկրներում (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրաք), թե թուրքիայում (Պոլիս, Զմյուռնիա, Տրապիզոն), մասնավորապես Արևմտյան Հայաստանի շատ քաղաքներում (Կարին, Մուշ, Խարբերդ, Սեբաստիա և այլն):

Կրթական օջախների այս ցանցը իր աղղկացության տակ է առել հայ իրականության խոշոր մի հատվածին: Մխիթարյանների դպրոցներն ավարտածները աչքի են ընկել հայ հին մատենագրության ու լեզվի բնագավառում ունեցած լայն գիտելիքներով, օտար լեզուների իմացությամբ, որը հնարավորություն է տվել նրանց հաղորդակից դառնալու արևմտանվրոպական և անտիկ շրջանի գրականությանն ու մտավոր արժեքներին: Արևմտահայ գրականության, թատրոնի, դպրոցի աչքի ընկնող շատ դեմքեր իրենց կրթությունն ստացել են Մխիթարյանների դպրոցներում: Դրանցից են բանաստեղծներ Թովմաս Թևրդյանը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Մկրտիչ Աճեմյանը, Դանիել Վարուժանը, գրող-հրապարակախոս Արփիար Արփիարյանը, թատերական գործիչ և դրամատուրգ Սրապիոն Հեքիմյանը, դերասաններ Պետրոս Աղամյանը, Վահրամ Փափազյանը, հայագետ Նորայր Բյուզանդացին և շատ ու շատ ուրիշներ:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների վանքերում պահվում են 5000-ի չափ ձեռագրեր, հաղարավոր հայերեն գրքեր՝ հնագույն տպագրություններից մինչև մեր օրերում լույս տեսածները: Հայ հին մատենագրության գրեթե բոլոր հայտնի դեմքերի երկերը հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները, դրանցից են Աղաթանգեղոսի, Փավստոս Բուղանդի, Կորյունի, Եղնիկի, Եղի-

շեի, Ղաղարի Փարպեցու, Հովհան Մանդակունու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու և ուրիշների մատյանները: Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը: Բացի մի քանի պատմիչների գործերի առանձին հրատարակություններից, նա մատենագրական բազմաթիվ երկեր ամփոփել է «Սուփերք հայկական» ընդհանուր խորագիրը կրող 22 փոքրադիր հատորների մեջ:

Հայ մատենագրության կարևորագույն երկերի հրատարակությանը զուգընթաց Մխիթարյանները լույս են ընծայել հին թարգմանությունների լավագույն նմուշները, այդ թվում՝ Աստվածաշունչը, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու և այլ հեղինակների տասնյակ երկերը:

Մեծ է Մխիթարյանների դերը անտիկ գրականության թարգմանության գործում: Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները տպագրել են Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսականը», Պլուտարքոսի «Զուգակշիռների» վեց հատորները, Քսենոփոնի «Կյուրոսի խրատը», Կիկերոնի, Սենեկայի, Մարկոս Ավրիլիուսի, Վիրգիլիուսի երկերը, Սոֆոկլեսի ողբերգությունները, Եզովպոսի Առակաները, արևմտաեվրոպական գրականությունից՝ Դանտեի «Աստվածային կատակերգությունը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը», Բայրոնի «Մանֆրեդը», Ռասինի, Կոռնելի ողբերգությունները և այլն:

Մխիթարյանները գրել են հին և նոր՝ տասնյակ ժողովուրդների պատմությունը: Նրանք բազմաթիվ աշխատություններ են տպագրել մեր ժողովրդի պատմության վերաբերյալ: Դրանց մեջ խոշոր արժեք է ներկայացնում Մ. Զամչյանի եռահատոր «Պատմութիւն հայոց» (Վենետիկ, 1784—1786) աշխատությունը, որ առաջին լուրջ փորձն էր հայ ժողովրդի պատմության ամբողջական շարադրանքի, ավանդական շրջանից մինչև XVIII դարի կեսերը: Զնայած իր բոլոր թերություններին, որոնք արդյունք են հեղինակի կրոնական աշխարհայացքի և դարաշրջանի պատմագրության ցածր մակարդակի, այդ աշխատությունը մինչև այժմ էլ չի կորցրել իր գիտական արժեքը և հարուստ նյութ կարող է տալ հայ ժողովրդի պատմությամբ ղբաղվողներին: Հիշատակության արժանի են նաև Մ. Բժշկյանի «Պատմութիւն Անույ կամ ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Ք. Քուշներյանի «Պատմութիւն գաղթականութեան Ղրիմու հայոց», Գ. Գովրիկյանի «Դրանսիլվանիո հայոց միտրապոլիսը», «Հայք յնդիսաբեթուպօլիս», Հ. Քոսյանի «Հայք ի Զմյուռնիա» աշխատությունները և այլն: Հին Հայաստանի աշխարհագրության, տեղադրության, հնախոսության, կենցաղի ու սովորությունների, ռազմա-քաղաքական ու վարչական վիճակի մասին արժեքավոր հետազոտություններ են դրել միաբանության անդամներ Ղ. Խնձիճյանը, Ղ. Ալիշանը, Վ. Հացունին և ուրիշներ: Ալիշանի «Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական» մեծարժեք գործերը Վենետիկի Մխիթարյանների հրատարակությունների փառքն են կազմում և դեռ երկար ժամանակ պիտի պահեն իրենց գիտական արժեքը: Բացի աշխարհագրական և տեղագրական բնույթի վերոհիշյալ հատորներից, բանաստեղծությունների հինգ հատորներից (որոնք լույս են տեսել «Նուագը» խորագրով և հիմքն են դրել հայ հայրենասիրական շափածոյի) Ալիշանը հրատարակել է մենագրություններ հին հայերի կրոնի, Հայաստանի բուսական աշխարհի մասին, ինչպես և մի հատուկ աշխատություն՝ Վենետիկ քաղաքի հետ հայերի ունեցած տնտեսական-մշակութային առնչությունների մասին:

Մեծ է այն դերը, որ վատարել են Մխիթարյանները հայագիտութեան դարձագրման գործում: Շարունակելով Մխիթար Սեբաստացու մշակած ծրագիրը, Մ. Զամչյանը, Մ. Ավգերյանը, Գ. Ավետիքյանը, Ա. Բագրատունին և ուրիշներ,— բոլորն էլ հին և նոր բազմաթիվ լեզուների հմուտ մարդիկ,— պատրաստել են հայերենից օտար և օտար լեզուներից հայերեն, ինչպես և հայոց լեզվի մի շարք բառարաններ, քերականութիւններ:

Հայ բառարանագրութեան մեջ անգնահատելի գործ է «նոր հայկազեան բառգիրքը» (Վենետիկ, 1836—1837), բաղկացած երկու ստվար հատորներից, որոնց վրա աշխատել են Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմելյանը և Մ. Ավգերյանը մոտ կես դար: Այդ բառարանը պարունակում է հեղինակներին մատչելի մեր հին մատենագրութեան պարունակած բոլոր բառերը, ճշգրիտ բացատրութիւններով, այլ լեզուների (հունարեն, լատիներեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) համապատասխան բառերի հիշատակումով և անհրաժեշտ վկայութիւններով: Նոր հայկազյան բառարանը ամփոփումն էր այն մեծ աշխատանքի, որ Վենետիկի Մխիթարյանները կատարել էին նախորդ մեկ դարի ընթացքում՝ հայոց լեզվի հետազոտման ուղղութեամբ:

Ճիշտ է, Վիեննայի Մխիթարյանները չեն ստեղծել ուրույն դպրոց հայ լեզվաբանութեան պատմութեան մեջ և մասնավորապես հայոց լեզվի ծագումնաբանական ցեղակցութեան հարցում հետեւել են ժամանակի եվրոպական լեզվաբանութեան (Պետերմանի, Վինդիշմանի, Լագարդի, հետագայում՝ Հյուբշմանի) տեսութիւններին, սակայն բուն հայերենի ներքին զարգացման, հայերենի տարբեր շրջանների հետազոտման ուղղութեամբ այդ միաբանութեան կատարած աշխատանքը կանգնած էր ժամանակի ընդհանուր լեզվաբանութեան բարձր մակարդակի վրա և խոշոր նվաճում էր հայագիտութեան ընդհանուր զարգացման գործում: Հիշատակութեան արժանի են մասնավորապես Հ. Գաթրճյանի, Մ. Գարագաշյանի, Ղ. Հովնանյանի, Հ. Տաշյանի, Ս. Տերվիշյանի, Ա. Այտրնյանի տասնյակ հետազոտութիւնները, որոնցից յուրաքանչյուրը մի բնագավառի մանրակրկիտ, հաճախ սպառիչ հետազոտումն է: Դարագլուխ կազմող արժեքավոր հետազոտութիւն է Ա. Այտրնյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» երկը:

Մխիթար Սեբաստացու հիմնադրած միաբանութեան երկու ճյուղավորումների հայագիտական աշխատութիւնները հարուստ նյութ կարող են տալ հայ մշակույթի տարբեր բնագավառները հետազոտողներին: Մխիթարի անցած ձանապարհը հարթ չի եղել, քարեր ու փշեր են եղել նրա անցուղիներում, տառապել է ու կրել մեծ դրկանքներ: Նույնիսկ միաբանութիւնը հաստատվելուց հետո նրա հակառակորդները հանդիստ չեն թողել նրան, դրպարտել են, ամբաստանել, Հռոմի պապին դրել Մխիթարի անվստահելիութեան մասին բազմաթիվ թղթեր: Նու ստիպված է եղել հավատարմութեան ստորագրութիւններ տալ կաթոլիկ եկեղեցուն և նրա վեհապետներին: Նրան ճիշտ չին հասկացել շատ հողեղբայրներ, բանասերներ ու կենսագիրներ, որոնք կարծել են, թե Մխիթարը անկեղծ չի եղել, Հռոմի բարիքներից օգտվելու համար կաթոլիկութեան դիմակ է հագնել, սակայն ներքուստ հոգով կապված է մնացել հայկական եկեղեցուն: Ընդունելով կաթոլիկութիւնը, Մխիթար Սեբաստացին երբեք չէր մոռանում իր ժողովրդին, իր հայրենիքը, աշխատում էր հայ լեզվի, հայ մշակույթի բարձրացման, հայութեան ինքնաճանաչման համար: Մխիթար Սեբաստացին մնալով հավատարիմ իր սկզբունքներին,

հետեւելով կաթողիկոսականը, դանց առնելով կաթողիկական և լուսավորչական եկեղեցու հակամարտությունը, գնաց իր ընտրած աղգային ճանապարհով: Նա ստեղծեց մի միաբանություն, որը շնայած իր գործունեության և գաղափարախոսության մի շարք հետագեւ կողմերին, կարեւոր դեր խաղաց Եվրոպայի միջավայրում հայ գրի ու գրականության տարածման, հայոց ձեռագրերի հավաքման, մշակման ու տպագրության գործում:

МХИТАР СЕБАСТАЦИ

(К 300-летию со дня рождения)

В. Е. АМАЗАСИЯН

(Резюме)

Статья посвящена жизни и научной деятельности основателя конгрегации Мхитаристов Мхитара Себастиаци (1676—1749). В ней показано научное значение трудов как самого Себастиаци, так и ученых-арменистов из венецианской и венской школ Мхитаристов.